ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 18» դեկտեմբերի 2020 թվականի թիվ 31

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 18-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերով .

համայնքի ավագանին որոշում է .

հաստատել Դվին համայնքի 18-ը դեկտեմբերի 2020 թվականի թիվ 10- րդ նիստի օրակարգը համաձայն հավելվածի

Ավագանի՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

1.Ա.Հայրապետյան

2.Կ.Դավթյան

3.Գ.Մալխասյան

4. Վ.Դերմոյան

5.Խ.Գրիգորյան

6.Ա. Սարգսյան

Համայնքի ղեկավար՝ Ա.Աբրահամյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դվին համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 18-ի
թիվ 31 որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Աբրահամյան/

2.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.Աբրահամյան/

Համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
+(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 18» դեկտեմբերի 2020թվականի թիվ 32-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ Ե
ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածներով.

Ավագանին որոշեց հաստատել

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնքի տարածքում 2021թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ ըստ հավելվածի

Կողմ -6 դեմ -0 ձեռնպահ -0

Ավագանի՝ Վ.Դերմոյան

Խ.Գրիգորյան

Ա.Հայրապետյան

Ա.Սարգսյան

Գ.Մալխասյան

Կ.Դավթյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դվին համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 18-ի
թիվ 32-Ն որոշման

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնքում 2021թվականի համար սահմանում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Դվին համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների նարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ *յոթ հազար հինգ հարյուր դրամ:*

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *տասնհինգ հազար դրամ:*
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *քսանհինգ հազար դրամ:*
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար *քսանհինգ հազար դրամ:*
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար *հիսուն հազար դրամ:*

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *հազար հինգ հարյուր դրամ:*
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ *երկու հազար հինգ հարյուր դրամ:*

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,

վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ *հազար հինգ հարյուր դրամ:*

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ. Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ *երկու հազար հինգ հարյուր դրամ:*

4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *՝հարյուր հազար դրամ:*

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *երեսուն հազար դրամ:*

6) Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *քսանհինգ հազար հինգ հարյուր դրամ:*

7) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *երեք հազար դրամ*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *հինգ հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում *վեց հազար հինգ հարյուր դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տաս հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝՝ *քսան հազար դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսանհինգ հազար դրամ:*

բ. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման *երեք հազար դրամ*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *հինգ հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *վեց հազար հինգ հարյուր դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *տաս հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսան հազար դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ *քսանհինգ հազար դրամ:*

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ *հարյուր յոթանասունհինգ դրամ՝* մեկ քառակուսի մետրի համար:

9) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ *քսանհինգ հազար դրամ:*

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ *երեսուն հազար դրամ.*

ե. շահումով խաղերի համար՝ *հարյուր հիսուն հազար դրամ.*

10) Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի

կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *հազար հինգ հարյուր դրամ:*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *Հինգ հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *Վեց հազար հարյուր դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *ութ հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *տասնութ հազար դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *քսան հազար դրամ:*

բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *հինգ հարյուր դրամ:*

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ *հազար դրամ:*

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *երկու հազար դրամ:*

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *երեք հազար դրամ:*

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *Հինգ հազար դրամ:*

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ՝ *ութ հազար դրամ:*

11) Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և

միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների

, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ՝ *հազար դրամ:*

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք

գովազդող արտաքին գովազդի համար՝ *հազար յոթ հարյուր հիսուն դրամ:*

գ. սոցիալական գովազդի համար՝ *զրո դրամ,*

դ. այլ արտաքին գովազդի համար՝ *յոթ հարյուր հիսուն դրամ:*

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *հիսուն հազար դրամ:*

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ *հինգ հազար դրամ:*

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ *երեք հարյուր հիսուն հազար դրամ:*

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ:*

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար *երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ:*

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ:*

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ *հինգը միլիոն դրամ:*

Սահմանված դրույքաչափերի համար կիրառել ենք 0.5 գործակիցը:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար դրամ:*

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության

թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *տասը հազար դրամ:*

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.՝ *տասը հազար դրամ:*

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.՝ *երկու հազար դրամ:*

5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ *երկու հազար դրամ:*

) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները ազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է

. Աղբահանության և սանիտարական մաքրման մասին Հայաստանի Հանրապետության սահմանված գով և դրույքաչափերի սահմաններում՝ փաստացի բնակվող յուրաքանչյուր անձի համար ամսական *արյուր դրամ:*

Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շ ենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդորում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

2) Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ:

:

2.Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում , այդ թվում՝ հասարակական , հանրային , ծառայությունների մատուցման, արտադրական , արդյունաբերական շենքերում և շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1)առևտրի /այդ թվում՝ շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար 50 դրամ,

2) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործողություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր - 30 դրամ.

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 8 դրամ .

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր - 4 դրամ .

5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով:

7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ ոոխհատուցման վճար՝ *հինգ հարյուր դրամ*

8) Համայնքի վարչական տարածքում անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար սահմայել Հետևյալ դրույքաչափերը

ա. Խոշոր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար տարեկան—800դրամ

բ.Մանր եղջերավոր անասունի յուրաքանչյուր գլխի համար տարեկան- 100դրամ

գ.Խոզի յուրաքանչյուր գլխի համար տարեկան- -200դրամ

դ. յուրաքանչյուր թռչնի համար տարեկան- -50դրամ

ե. Ձիու յուրաքանչյուր գլխի համար տարեկան- 700դրամ

Համայնքի ղեկավար Ա.Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի N 33-Ն

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

Հաստատել Դվին համայնքի 2020 թվականի բյուջեի փոփոխությունը՝

1. *Բյուջեի 11.01.02.51 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /վարչական բյուջեի պահուստային մաս / 4891 հոդվածը պակասեցնել 1312000 /մեկ միլիոն երեք հարյուր տասներկու հազար / դրամի չափով :*

2. *Բյուջեի 09.08.01.55 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման / կրթություն այլ դասերին չպատկանող / 4269 /հատուկ նպատակային այլ ապրանքներ/ հոդվածը պակասեցնել 336000 /երեք հարյուր երեսունվեց հազար/ ՀՀ դրամի չափով՝:*

3. *Բյուջեի 09.08.01.55 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման / կրթություն այլ դասերին չպատկանող/ 4637 հոդվածը /ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ ավելացնել 928000 /ինը հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամի չափով՝ Դվին համայնքի՝ Լ.Ազգալդյանի անվան միջնակարգ դպրոցում կառուցվող նախակրթարանի կառուցման ծախսերը հոգալու նպատակով:*

4. *Բյուջեի 10.07.01.55 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման / հասարակական կազմակերպություններին աջակցություն/ 4819 հոդվածը /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ ավելացնել 120000 / հարյուր քսան հազար ՀՀ դրամի չափով՝ Դվին համայնքում "* Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն " ՀԿ կողմից իրականացվող կրթական ծրագրի շրջանակներում վերանորոգվող ինժեներական լաբորատորիայի *ծախսերին աջակցելու նպատակով:*

5. *Բյուջեի՝ 10.07.01.54 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման / սոցիալական անապահով անձանց աջակցություն / 4729 հոդվածը ավելացնել 600000 /վեց հարյուր հազար/ դրամի չափով:*

Ավազանի՝ կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Խ Գրիգորյան

Ա.Հայրապետյան

Կ.Դավթյան

Ա.Սարգսյան

Վ.Դերմոյան

Գ.Մալխասյան

Համայնքի ղեկավար Ա. Աբրահամյան